Պ-1368-12.06.2026,01.07.2026-ՊԻ-011 **Երկրորդ ընթերցում**

Լրամշակված նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2016 թվականի մայիսի 25-ի «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածում՝

1) 1-ին և 2-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ ընտրելու իրավունք ունեն ընտրության օրը (այսուհետ՝ քվեարկության օրը) 18 տարին լրացած, քվեարկության օրվան նախորդող 48-րդ, իսկ Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների դեպքում՝ 28-րդ օրվա դրությամբ համապատասխանաբար դրան նախորդող 730 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում փաստացի 366 և ավելի օր գտնվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները:

2. Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրելու իրավունք ունեն քվեարկության օրը 18 տարին լրացած՝ ընտրությունն անցկացվող համայնքի բնակչության ռեգիստրում՝

1) մինչև քվեարկության օրն առնվազն 6 ամսվա հաշվառում ունեցող, քվեարկության օրվան նախորդող 48-րդ, իսկ արտահերթ ընտրությունների դեպքում՝ 28-րդ օրվա դրությամբ համապատասխանաբար դրան նախորդող 730 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում փաստացի 366 և ավելի օր գտնվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները.

2) մինչև քվեարկության օրն առնվազն 6 ամսվա հաշվառում չունեցող՝ սույն մասի 1-ին կետով սահմանված ժակետում՝ Հայաստանի Հանրապետությունում փաստացի գտնվելու պահանջը բավարարող Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, որոնք

համայնքում հաշվառվել են պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրվելու կամ ազատազրկման ձևով պատիժը կրելուց ազատվելու հանգամանքներով պայմանավորված.

3) մինչև քվեարկության օրն առնվազն մեկ տարվա հաշվառում ունեցող՝ սույն մասի 1-ին կետով սահմանված ժակետում՝ Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմքերով փաստացի գտնվելու պահանջը բավարարող Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձինք (այսուհետ՝ քաղաքացիություն չունեցող ընտրող)։».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին մաս.

«2.1. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված՝ Հայաստանի Հանրապետությունում փաստացի գտնվելու ժամկետում չեն ներառվում այն դեպքերը, երբ բացակայությունը պայմանավորված է եղել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայության մեջ գտնվող անձի՝ ծառայողական նպատակներով արտերկրում գտնվելու կամ Հայաստանի Հանրապետության դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություններում դիվանագիտական ծառայություն անցնող անձի ընտանիքի անդամի՝ դիվանագիտական ծառայություն անցնող անձի հետ արտերկրում բնակվելու կամ արտերկրում բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնառության հանգամանքներով։»։

Հոդված 2. Օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասություն.

«Սույն օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետությունում փաստացի գտնվելու պահանջին բավարարելու հանգամանքը հաստատվում է անձի՝ Հայաստանի Հանրապետության սահմանի փաստացի սահմանահատումներով՝ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգի կառավարումն իրականացնող լիազոր մարմնի կողմից, որը Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրի և Հայաստանի Հանրապետության սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգի՝ հատուկ ծրագրային ապահովման միջոցով փոխգործելիության արդյունքում ձևավորում է սույն օրենսգրքի 2-րդ

հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետությունում փաստացի գտնվելու պահանջին բավարարող ընտրողների ցուցակները:»:

Հոդված 3. Օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասում՝

1) 3-րդ կետի «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ կետ.

«4) հաշվառված են համապատասխան ընտրական տեղամասի նկարագրում ընդգրկված հասցեում, սակայն սույն օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին կամ 2-րդ մասերով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետությունում փաստացի գտնվելու պահանջին չբավարարելու հիմքով չեն ընդգրկվել այդ ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում:»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից մեկ ամիս հետո:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

ՀՀ Սահմանադրությունը նախատեսում է ժողովրդաիշխանության իրացման 2 հիմնական ձևերին՝ ընտրություններին և հանրաքվեներին վերաբերելի ընդհանուր դրույթներ՝ մնացած մանրամասները թողնելով համապատասխան օրենքների կարգավորմանը: Սակայն ներկայիս կարգավորումներով ՀՀ Ազգային ժողովի ընտրություններին և հանրաքվեներին մասնակցելու իրավունքի իրացման համար բացակայում է քաղաքացի-պետություն մշտական կապն արտացոլող որևէ լուծում (ի տարբերություն տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների և տեղական հանրաքվեների):

Պետության հետ քաղաքացու բավարար կապի (պարբերական կապի) տեսության հիմքում, ըստ էության, ընկած է այն ողջամիտ տրամաբանությունը, որ քաղաքացիությունը **չի կարող լինել միայն ֆորմալ իրավական կապ**, այլ՝ պետք է արտացոլի **իրական սոցիալական, տնտեսական և կենսագործունեության կապ** պետության հետ: Քաղաքացիությունն արդյունավետ է միայն դեպքում, երբ առկա է **իրական կապ** անձի և պետության միջև: Ընդ որում, քաղաքացին ստանում է տվյալ պետության կողմից երաշխավորված իրավունքների ամենամեծ ծավալը և իրավական պաշտպանության ամենաբարձր աստիճանը, որը տվյալ պետության հետ կայուն կապի բացակայության պայմաններում դառնում է կապի **ֆորմալ և միակողմանի** դրսևորում:

Այս իմաստով, քաղաքացիությունը անհրաժեշտ, բայց ոչ ամենևին բացառիկ և ոչ միակ պայմանն է՝ ժողովրդաիշխանության իրացման հիմնական ձևերին՝ ընտրություններին և հանրաքվեներին մասնակցելու համար: Քաղաքացիությունը թեև քաղաքացի-պետություն կապի հիմնական իրավական դրսևորումն է, սակայն ինքնին քաղաքացիության առկայությունը չի վկայում պետության հետ բավարար կապի առկայության մասին: Ըստ այդմ, քաղաքացիությունը կարող է կորցնել իր «որոշիչ դերակատարումը» այդ հարցում, եթե անձը տևական ժամանակ կտրված է պետության քաղաքական, սոցիալական, տնտեսական կյանքից: Այս համատեքստում, ընտրությունները պետք է արտացոլեն այն անձանց կամքը,

որոնք իրապես գտնվում են այդ պետության որոշումների ազդեցության տիրույթում: Այս իմաստով, թեև քաղաքացիությունը ելակետային է ժողովրդաիշխանության իրացման համար, սակայն անհրաժեշտ է ապահովել նաև մասնակցային ժողովրդավարության բովանդակային կողմը, այսինքն՝ ընտրողի բավարար կապը պետության հետ:

Ավելին, քաղաքացիությունը չի դրսևորվում միայն որպես իրավական պատկանելություն: Մասնավորապես, քաղաքացիությունը ոչ թե սոսկ իրավական կապ է պետության հետ, այլ նաև՝ պատկանելություն և մասնակցություն այդ պետության քաղաքական կյանքին և իր շահերը շոշափող համապատասխան որոշումների կայացմանը: Հետևապես, այս տեսանկյունից ևս, ժողովրդաիշխանության իրացման առանցքային եղանակներին մասնակցությունն օբյեկտիվորեն առավել արդարացված կարող է լինել այն քաղաքացու համար, ում համար տվյալ պետությունը հանդես է գալիս որպես **հիմնական շահերի** կենտրոն՝ դրան համապատասխան հետևանքներով հանդերձ. քաղաքացին ոչ միայն մասնակցում է հանրային իշխանության ձևավորմանը, այլև՝ ստանձնում է այդ իշխանության գործունեության հետևանքները կրելու պատրաստակամություն՝ ներգրավվելով այդ իշխանության նկատմամբ ժողովրդավարական վերահսկողությանը:

Այս մոտեցումը համահունչ է նաև Սահմանադրական դատարանի՝ քաղաքացիության ինստիտուտի վերաբերյալ արտահայտած դիրքորոշմանը: Մասնավորապես, Սահմանադրական դատարանը 2011 թվականի մարտի 15-ի ՍԴՈ-945 որոշմամբ քաղաքացիությունը բնութագրել է որպես անձի և պետության միջև առկա **իրավական կայուն կապ**, որն արտահայտվում է փոխադարձ իրավունքների, պարտականությունների և պատասխանատվության համակցության մեջ:

ՍԴՈ-945 որոշման մեջ արտահայտված դիրքորոշումից հետևում է, որ քաղաքացիությունը միայն ձևական իրավական կարգավիճակ կամ անձնագիր ունենալը չէ: Քաղաքացիության հիմքում դրված է անձի և պետության միջև **կայուն, շարունակական և փոխադարձ** բնույթի կապը, որն ունի ոչ միայն իրավունքների, այլև՝ պարտականությունների և պատասխանատվության բովանդակություն: Հետևաբար, ընտրական և հանրաքվեին մասնակցելու իրավունքները, լինելով քաղաքացիության հետ անմիջականորեն կապված քաղաքական իրավունքներ և պետական իշխանության ձևավորմանը ու հանրային կարևորագույն նշանակության հարցերի լուծմանը մասնակցելու հիմնական միջոցներ, չեն կարող կտրվել քաղաքացիության այդ բովանդակային ընկալումից:

Եթե քաղաքացին մասնակցում է պետական իշխանության ձևավորմանը և հանրային կարևագույն հարցերով որոշումների կայացմանը, ապա նա ոչ միայն իրացնում է իր քաղաքական իրավունքները, այլև՝ ազդում է այն իշխանության ձևավորման և կարևորագույն այն որոշումների ընդունման վրա, որոնք հետագայում վճռորոշ ազդեցություն են ունենալու պետության ներքին և արտաքին քաղաքականության, անվտանգության, հարկային, սոցիալական, տնտեսական, կրթական, պաշտպանության և այլ կենսական ոլորտների վրա: Այդ որոշումների անմիջական և առօրյա հետևանքները առաջին հերթին կրում են Հայաստանի Հանրապետությունում բնակվող և նրա հանրային կյանքում ներգրավված քաղաքացիները:

Այս համատեքստում, ՍԴՈ-945 որոշման մեջ արտահայտված «կայուն իրավական կապի» գաղափարը կարող է ծառայել որպես կարևոր սահմանադրաիրավական հիմք այն դիրքորոշման համար, որ ընտրական իրավունքի և հանրաքվեին մասնակցելու իրավունքի իրացման կարգը սահմանելիս օրենսդիրը կարող է հաշվի առնել քաղաքացիության ոչ միայն ձևական, այլև՝ **բովանդակային** կողմը: Հետևաբար, օրենսդիրը կարող է նախատեսել այնպիսի կարգավորումներ, որոնք ընտրական իրավունքի և հանրաքվեին մասնակցելու իրավունքի իրացումը կապում են Հայաստանի Հանրապետության հետ **իրական, կայուն և փաստացի կապի** առկայության հետ:

Վերոգրյալի համատեքստում, հարկ է ընդգծել, որ **այս տրամաբանությունը ներկայումս իր իրավական ձևակերպումն է ստացել տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների և տեղական հանրաքվեների մասով՝ որոշակիորեն այլ ձևակերպմամբ, այն է՝ քվեարկությունից առաջ տվյալ համայնքում առնվազն 6 ամսվա հաշվառում ունենալու պայմանի տեսքով**: Հետևաբար, այս տեսանկյունից առաջանում է տրամաբանական խզում. մասնավորապես, տեղական, այլ կերպ ասած՝ առավել նվազ ազդեցություն ունեցող իշխանության մարմինների ձևավորման կամ տեղական նշանակության հարցերի լուծման պարագայում նախապատվությունը տրված է համայնքի կյանքին ներգրավվածությանը, մինչդեռ համապետական նշանակության ներկայացուցչական մարմնի ձևավորման և համապետական հանրաքվեներին մասնակցության պարագայում՝ ոչ, որպիսի մոտեցումը խաթարում է համակարգային միասնականությունը:

<u>2. Առաջարկվող կարգավորման բնույթը.</u>

Նախագծերով առաջարկվում է համապետական ընտրություններին և հանրաքվեներին մասնակցելու պարագայում կարևորել քաղաքացիության ուժով պետության հետ անձի կապի ոչ միայն ֆորմալ, այլ նաև՝ **բովանդակային կողմը**: Ընդ որում, պետության հետ ունեցած հարաբերությունների բնույթն ու բովանդակությունը գնահատելու համար կողմնորոշիչ կարող է լինել որոշակիորեն երկարատև ժամանակահատվածում այդ հարաբերությունների շարունակականությունը՝ որպես առավել արդարացի և ճշգրիտ ցուցիչ: Ըստ այդմ, առաջարկվում է ընտրություններին և հանրաքվեներին մասնակցելու համար սահմանել նաև քվեարկության կամ հանրաքվեի օրվան նախորդող 48-րդ օրվա դրությամբ, իսկ արտահերթ ընտրությունների կամ նոր քվեարկության դեպքում՝ 28-րդ օրվա դրությամբ համապատասխանաբար դրան նախորդող 730 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում փաստացի 366 և ավելի օր գտնվելու պահանջ՝ ապահովելով տեղական ինքնակառավարման մարմինների և տեղական հանրաքվեների համար ներկայումս սահմանված կարգավորումների հետ համակարգային միասնականությունը: Նման ժամկետային միջակայքի սահմանման համար որպես ուղենիշ ընտրվել է պասիվ ընտրական իրավունքի իրացման համար նախատեսված 4 տարվա կտրվածքի կեսը, այն է՝ 2 տարին:

Նշվածի համատեքստում՝ համակարգային միասնակությունն ամբողջացնելու տեսանկյունից, կարիք կա համանման նստակեցության ցենզ նախատեսել նաև տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին և տեղական հանրաքվեներին մասնակցության համար:

Զուգահեռաբար, գործնական հարթությունում կիրառելիության խնդիրները բացառելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ նախատեսվում է իրավական հնարավորություն առ այն, որ՝

- սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետությունում փաստացի գտնվելու պահանջին բավարարելու հանգամանքը հաստատվի անձի՝ Հայաստանի Հանրապետության սահմանի փաստացի սահմանահատումներով՝ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգի կառավարումն իրականացնող լիազոր մարմնի կողմից, որը Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրի և Հայաստանի Հանրապետության սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգի՝ հատուկ ծրագրային ապահովման միջոցով փոխգործելիության արդյունքում կձևավորի սահմանված ժամկետում Հայաստանի

Հանրապետությունում փաստացի գտնվելու պահանջին բավարարող ընտրողների ցուցակները:

- ընտրողների լրացուցիչ ցուցակում ընդգրկվելու համար դիմում ներկայացնելու հնարավորություն նախատեսող հիմքերը համալրվեն նաև բնակության ցենզին չբավարարելու հիմքով համապատասխան ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ընդգրված չլինելու հանգամանքով:

3. Լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտությունը և պետական բյուջեի եկամուտներում և ծախսերում սպասվելիք փոփոխությունները.

Նախագծերի ընդունմամբ պետական բյուջեի եկամուտներում և ծախսերում ավելացումներ կամ նվազեցումներ չեն առաջանում:

4. Նախագծերի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները, անձինք և նրանց դիրքորոշումը.

Նախագծերը մշակվել են ՀՀ ներքին գործերի նախարարության հետ համագործակցությամբ:

5. Նախագծերի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը.

Նախագծերի ընդունմամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանա:

6. Ակնկալվող արդյունքը.

Նախագծերի ընդունման արդյունքում կապահովվի ժողովրդաիշխանության իրացման համակարգային միասնականությունը՝ երաշխավորելով ժողովրդավարական կառավարմանը այն քաղաքացիների մասնակցությունը, որոնց կապը պետության հետ ունի **իրական բնույթ և բովանդակություն:**

Պ-1368-12.06.2026,01.07.2026-ՊԻ-011/1 ~~Առաջին~~ Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1 2016 թվականի մայիսի 25-ի «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածում՝

1) 1-ին և 2-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ

«1. Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ ընտրելու իրավունք ունեն ընտրության օրը (այսուհետ՝ քվեարկության օրը) 18 տարին լրացած, քվեարկության օրվան նախորդող 48-րդ, իսկ Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների դեպքում՝ 28-րդ օրվա դրությամբ համապատասխանաբար դրան նախորդող 730 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում փաստացի 366 և ավելի օր գտնվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները:

2. Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրելու իրավունք ունեն քվեարկության օրը 18 տարին լրացած՝ ընտրությունն անցկացվող համայնքի բնակչության ռեգիստրում՝

1) մինչև քվեարկության օրն առնվազն 6 ամսվա հաշվառում ունեցող, քվեարկության օրվան նախորդող 48-րդ, իսկ արտահերթ ընտրությունների դեպքում՝ 28-րդ օրվա դրությամբ համապատասխանաբար դրան նախորդող 730 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում փաստացի 366 և ավելի օր գտնվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները.

2) մինչև քվեարկության օրն առնվազն 6 ամսվա հաշվառում չունեցող՝ սույն մասի 1-ին կետով սահմանված ժակետում՝ Հայաստանի Հանրապետությունում փաստացի գտնվելու պահանջը բավարարող Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, որոնք

համայնքում հաշվառվել են պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրվելու կամ ազատազրկման ձևով պատիժը կրելուց ազատվելու հանգամանքներով պայմանավորված.

3) մինչև քվեարկության օրն առնվազն մեկ տարվա հաշվառում ունեցող՝ սույն մասի 1-ին կետով սահմանված ժակետում՝ Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմքերով փաստացի գտնվելու պահանջը բավարարող Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձինք (այսուհետ՝ քաղաքացիություն չունեցող ընտրող)։»

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 21-ին մաս

«21. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված՝ Հայաստանի Հանրապետությունում փաստացի գտնվելու ժամկետում չեն ներառվում այն դեպքերը, երբ բացակայությունը պայմանավորված է եղել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայության մեջ գտնվող անձի՝ ծառայողական նպատակներով արտերկրում գտնվելու կամ Հայաստանի Հանրապետության դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություններում դիվանագիտական ծառայություն անցնող անձի ընտանիքի անդամի՝ դիվանագիտական ծառայություն անցնող անձի հետ արտերկրում բնակվելու կամ արտերկրում բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնառության հանգամանքներով։»։

Հոդված 2 Օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասություն

«~~Ընդ որում, ընտրողների ցուցակները ձևավորվում են~~ Սույն օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետությունում փաստացի գտնվելու պահանջին բավարարելու հանգամանքը հաստատվում է անձի՝ Հայաստանի Հանրապետության սահմանի փաստացի սահմանահատումներով՝ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգի կառավարումն իրականացնող լիազոր մարմնի կողմից, որը Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրի և Հայաստանի Հանրապետության սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգի՝ հատուկ ծրագրային ապահովման միջոցով փոխգործելիության արդյունքում ձևավորում է սույն օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված ժամկետում Հայաստանի

Հանրապետությունում փաստացի գտնվելու պահանջին բավարարող ~~անձանց տվյալների հիման վրա~~ ընտրողների ցուցակները:»:

Հոդված 3 Օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասում՝

1) 3-րդ կետի «:» կետադրական նշանը փոխարինել «» կետադրական նշանով

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ կետ

«4) հաշվառված են համապատասխան ընտրական տեղամասի նկարագրում ընդգրկված հասցեում, սակայն սույն օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին կամ 2-րդ մասերով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետությունում փաստացի գտնվելու պահանջին չբավարարելու հիմքով չեն ընդգրկվել այդ ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում:»:

Հոդված 4 Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից մեկ ամիս հետո:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Պ-1368-12.06.2026,01.07.2026-ՊԻ-011/1) ԵՎ «ՀԱՆՐԱՔՎԵԻ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ (Պ-1368[1]-12.06.2026,01.07.2026-ՊԻ-011/1) ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Ալխաս Ղազարյան	«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում	Անձի՝ Հայաստանի Հանրապետությունում փաստացի գտնվելու պահանջին բավարարելու հանգամանքը հաստատելու համար առավել արդյունավետ գործիքակազմ	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:

		փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի ն**ախագծի 2-րդ հոդված**	ներդնելու նպատակով անհրաժեշտ է որոշակիորեն վերանայել նախագծի 2-րդ հոդվածով գործող օրենսգրքի 9-րդ հոդվածի 4-րդ մասում լրացվող կարգավորումը՝ ընդգծելով, որ բնակության ցենզի պահանջին բավարարելու հանգամանքը հաստատվում է անձի՝ Հայաստանի Հանրապետության սահմանի փաստացի սահմանահատումներով՝ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգի կառավարումն իրականացնող լիազոր մարմնի կողմից, որը Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրի և Հայաստանի Հանրապետության սահմանային էլեկտրոնային կառավարման		

			տեղեկատվական համակարգի՝ հատուկ ծրագրային ապահովման միջոցով փոխգործելիության արդյունքում ձևավորում է համապատասխան պահանջին բավարարող ընտրողների ցուցակները: Ըստ այդմ, առաջարկում ենք «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի ն**ախագծի 2-րդ հոդվածով օրենսգրքի** 9-րդ հոդվածի 4-րդ մասում լրացվող նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Սույն օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված		

			ժամկետում Հայաստանի Հանրապետությունում փաստացի գտնվելու պահանջին բավարարելու հանգամանքը հաստատվում է անձի՝ Հայաստանի Հանրապետության սահմանի փաստացի սահմանահատումներով՝ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգի կառավարումն իրականացնող լիազոր մարմնի կողմից, որը Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրի և Հայաստանի Հանրապետության սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգի՝ հատուկ ծրագրային ապահովման միջոցով փոխգործելիության արդյունքում ձևավորում է սույն		

			օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետությունում փաստացի գտնվելու պահանջին բավարարող ընտրողների ցուցակները:»: Հիմնավորումը լրամշակվել է:		